Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
ապրիլի 10-ի N 417 - Լ որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՐԱՏԱՊ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Սույն միջոցառման նպատակն է լրացուցիչ հրատապ սոցիալական աջակցություն տրամադրել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կարիքավոր ընտանիքներին, որոնց անդամների (այսուհետ՝ բռնի տեղահանված անդամ) տվյալներն առկա են Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառուների կամ օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում կամ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների տվյալների շտեմարանում կամ հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրին դիմած և շահառուի կարգավիճակ չստացած ընտանիքների (այդ թվում՝ մեկ անդամից բաղկացած) անհատական դեպքերն ուսումնասիրելու նպատակով համապատասխան հանձնաժողովի կայացրած որոշումների արդյունքում շահառուի կարգավիճակ ստացած անձինք (այսուհետ՝ շահառուներ)՝ բացառությամբ՝

1) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում ժամանակավոր բնակվող անձանց.

2) պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում ժամանակավոր բնակվող անձանց.

3) պետական աջակցությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող անձանց.

4) ընտանիքների, որոնց անդամներից մեկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող բնակության համար նախատեսված բնակելի անշարժ գույքի միակ սեփականատեր, կամ ընտանիքի անդամներից մեկը կամ մի քանի անդամները միասին միևնույն գույքի նկատմամբ ունեն ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով (մեկ անդամը կամ ընտանիքի անդամները միասին՝ 50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակության համար նախատեսված բնակելի անշարժ գույք, կամ ընտանիքի անդամներից մեկը կամ մի քանի անդամները միասին միևնույն գույքի նկատմամբ ունեն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք (մեկ անդամը կամ ընտանիքի անդամները միասին՝ 50 տոկոս և ավելի մասնաբաժնով).

5) ընտանիքների, որոնց անդամներից մեկն ունի 2017 թվականից հետո արտադրված ավտոտրանսպորտային միջոց (Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և համարանիշ ունեցող) կամ, եթե ավտոտրանսպորտային միջոցի գույքահարկի (ընտանիքում մեկից ավելի գույքի առկայության դեպքում՝ հանրագումարային) տարեկան չափը գերազանցում է 15000 դրամը:

2. Սահմանել, որ՝

1) սույն միջոցառման իմաստով կարիքավոր ընտանիքներ են համարվում այն ընտանիքները, որոնց մեկ անդամի ամսական եկամտի չափը ցածր է 55000 դրամից: Ընդ որում, մեկ անդամի ամսական եկամտի չափը որոշվում է ընտանիքի ամսական եկամուտների հանրագումարի և ընտանիքի անդամների թվի հարաբերությամբ.

2) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ամսական եկամտի կազմի մեջ ներառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի

հունվարի 9-ի N 27-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) N 1 հավելվածի 32-րդ կետի 1-10-րդ ենթակետերով սահմանված եկամտի տեսակները.

3) սույն միջոցառման շրջանակում բռնի տեղահանված անդամ է դիտարկվում նաև մինչև 18 տարեկան այն երեխան, որի ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն (այսուհետ՝ ծնող) տվյալ ընտանիքի բռնի տեղահանված անդամ է.

4) սույն հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով և սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղեկատվության կիրառման համար հիմք են ընդունվում որոշման N 3 հավելվածի համաձայն ստացված տվյալները և որոշման N 1 հավելվածի 31-րդ կետի պահանջները:

3. Սույն միջոցառման շրջանակում սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամենամսյա դրամական աջակցության ձևով՝ 2025 թվականի ապրիլ ամսվանից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ ամիսների համար:

4. Սոցիալական աջակցության ամսական չափը հաշվարկվում է ընտանիքի համար՝ հիմք ընդունելով ընտանիքում բռնի տեղահանված անդամների թիվը:

5. Սոցիալական աջակցության ամսական չափը կազմում է՝

1) ընտանիքի առաջին բռնի տեղահանված անդամի համար՝ 40000 դրամ.

2) սկսած ընտանիքի բռնի տեղահանված երկրորդ անդամից՝ ընտանիքի յուրաքանչյուր բռնի տեղահանված անդամի համար՝ 10000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ